https://doi.org/10.46991/hc.2023.20.2.121

Sociological basis of daily history. theoretical and methodological observations[1]

Gagik Zhamharyan
https://orcid.org/0009-0000-1902-5388
Candidate of Historical Sciences, researcher of the Institute of History of NAS RA
zhamharyangagik@yandex.ru

Key words: historical theory, sociology theory, interdisciplinary approach, social history, history of everyday life, anthropological turn.

The history of everyday life is one of the popular and constantly evolving directions of historical research. Its emergence is due to approaches that have abandoned historical research to positive traditions and valued the human-centred value of the historical paradigm.

In Armenian historiography, the history of everyday life is a relatively new field of study, the theoretical and methodological problems of which are not sufficiently clarified. In the article these problems are discussed from the point of view of interdisciplinary approach. The author tries to substantiate the thesis that knowledge of the history of everyday life should begin with the study of theoretical and methodological analysis of the problem of everyday life, presented in sociological theories. Briefly describing those sociological theories that directly or indirectly address the problem of everyday life, the author considers them in a certain sequence recognized in the theoretical discussions of the topic. Such an approach could help Armenian historians of everyday life to form a clearer representation of the phenomenon of everyday life.

Առօրեականության պատմության սոցիոլոգիական հենքը: Տեսական և մեթոդաբանական դիտարկումներ

Գագիկ Ժամհարյան
պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող

---

[1] Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 21T6A274 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

History and Culture., Vol.-2(20), 2023, pp. 121-130.
Received: 09.05.2023
Revised: 12.11.2023
Accepted: 15.12.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

Sociological basis of daily history. theoretical and methodological observations

Առօրեականության պատմության սոցիոլոգիական հենքը: Տեսական և մեթոդաբանական դիտարկումներ

Բանալի բառեր՝ պատմության տեսություն, սոցիոլոգիական տեսություն, միջգիտակարգային մոտեցում, սոցիալական պատմություն, առօրեականության պատմություն, մարդաբանական շրջադարձ:

Առօրեականության պատմությունը պատմագիտական հետազոտությունների հանրաճանաչ և անընդհատ զարգացող ուղղություններից մեկն է: Նրա ձևավորումը պայմանավորված է պատմական հետազոտություններում դրապաշտական ավանդույթները մերժող և պատմության հարացույցի մարդակենտրոն նշանակությունն արժևորող մոտեցումներով:

Հայ պատմագիտության մեջ առօրեականության պատմությունը համեմատաբար նոր ուսումնասիրության ոլորտ է, որի տեսական և մեթոդական հիմնախնդիրները լիովին պարզաբանված չեն: Հոդվածում դրանք քննարկվում են միջգիտակարգային մոտեցման տեսանկյունից: Հեղինակը փորձում է հիմնավորել այն թեզը, որի համաձայն առօրեականության պատմության իմացությունը պետք է սկսել սոցիոլոգիական տեսություններում առօրեականության հիմնախնդրի տեսական և մեթոդական վերլուծությունների ուսումնասիրությունից: Համառոտ անդրադարձ կատարելով սոցիոլոգիական այն տեսություններին, որոնցում ուղղակի կամ անուղղակի լուսաբանված է առօրեականության հիմնախնդիրը՝ հեղինակը դրանք դիտարկում է այն հաջորդականությամբ, որն ընդունված է թեմայի տեսական քննարկումներում և կարող է օգնել նաև առօրեականության հայ պատմաբաններին առօրեականության ֆենոմենի վերաբերյալ առավել պարզորոշ պատկերացում ձևավորելուն:

Социологическая основа истории повседневности. теоретические и методологические наблюдения

Гагик Жамгарян

Кандидат исторических наук, научный сотрудник Института истории НАН РА

Ключевые слова-историческая теория, теория социологии, междисциплинарный подход, социальная история, история повседневности, антропологический поворот.

История повседневности одна из популярных и непрерывно развивающихся направлений исторических исследований. Ее возникновение связано с подходами, отказывающихся в исторических исследованиях от позитивистских традиций и ценивших человеко-центрированное значение исторической парадигмы.

В армянской историографии история повседневности сравнительно новая область исследований, теоретические и методологические проблемы которой недостаточно прояснены. В статье данные проблемы обсуждаются с точки зрения междисциплинарного подхода. Автор пытается обосновать тезис, согласно которому познание истории повседневности нужно начать с изучения теоретических и методологических анализ проблемы повседневности, представленных в социологических теориях. Кратко описывая те социологические теории, в которых прямо или косвенно освещена проблема повседневности, автор их рассматривает в определенной последовательности, признанной в теоретических обсуждениях данной темы. Такой подход может помочь армянским историкам повседневности для формирования более отчетливого представления феномена повседневности.

* * *

Ներածություն: Որպես պատմագիտական հետազոտությունների ինքնուրույն ուղղություն՝ առօրեականության պատմությունը սկսել է հանդես գալ 20-րդ դարի 70-80-ական թվականներին: Այս գիտակարգի առաջացման վրա մեծ ազդեցություն է թողել դեռևս դարասկզբին ֆրանսիական «Աննալների» դպրոցի նախաձեռնած գիտական շարժումը, որը հեղափոխական նշանակություն ունեցավ պատմական գիտության հետազոտական խնդիրների և մեթոդաբանության վերաիմաստավորման գործում՝ հաղորդելով պատմության հարացույցին սկզբունքորեն նոր բովանդակություն: «Աննալների» դպրոցի հիմնադիր հայրերից մեկը՝ Լյուսիեն Ֆևրը, առաջիններից մեկն էր, ով սահմանեց սոցիալական պատմության հայեցակարգը՝ պատմությունը բնութագրելով «իր էությամբ արդեն իսկ սոցիալական» գիտություն [Февр, 1991, 26]: Հետագայում այս հայեցակարգը մեծ ճանաչում ձեռք բերեց պատմաբանների շրջանում: Սոցիալական պատմության գլխավոր ուղերձը հրաժարումն էր քաղաքական ու տնտեսական իրադարձային պատմությունից և դրա կանոնակարգված, նկարագրական շարադրանքից: Պատմաբանը շրջվում էր դեպի հասարակություն, դեպի հասարակական ամենատարբեր կառուցվածքների և ինստիտուտների ուսումնասիրություն, պատմությունն ընդլայնում էր իր հետազոտության շրջանակը՝ դրանում ընդգրկելով հասարակական զարգացման այնպիսի ոլորտներ, որոնք սովորաբար դուրս էին մնում ավանդական պատմագիտության ուշադրությունից: Դարի 60-70-ական թվականներին հասարակական գիտություններում տեղի ունեցած մարդաբանական շրջադարձը չշրջանցեց նաև պատմական գիտությունը: Եթե մինչ այդ սոցիալական պատմությունն ուշադրություն էր դարձնում միայն սոցիալական ավելի մեծ հանրույթներին և հասարակական կառուցվածքներին, ապա այժմ նոր սոցիալական պատմության ուշադրության կենտրոնում հայտնվեցին ավելի փոքր կառուցվածքներ (ընտանիք, համայնք, ծխական համայնք և այլն)՝ իրենց ներսում ծավալվող առավել բարդ ու բազմաշերտ սոցիալական հարաբերություններով [Репина, 2004, 232]: Պատմագիտությունն սկսեց մեծ կարևորություն տալ մարդու հիմնախնդրին՝ նրա անհատական կենսափորձի, հասարակության հետ հարաբերություններում նրա կողմից դրսևորվող սոցիալ-հոգեբանական վարքագծի, մի խոսքով՝ մարդկային կեցության տարբեր կողմերի ուսումնասիրությանը սոցիալ-մշակութային ամենատարբեր համատեքստերում: Այս հետազոտական մտայնությունն արտահայտվեց նաև դարի արդեն 70-80-ական թվականներին ձևավորված նոր սոցիալական պատմության ուղղություններից մեկի՝ առօրեականության պատմության հետազոտական խնդիրներում:

Առօրեականության պատմությունն այսօր էլ կանգնած է իր առարկայի սահմանման և հետազոտական մեթոդաբանության հստակեցման խնդրի առաջ, ինչի վերաբերյալ առկա են ոչ միայն բազմաթիվ մեկնաբանություններ, այլ նաև մոլորություններ: Հայ պատմագրության համար այն ևս հետազոտական նոր հիմնահարց է, և մեզանում դրա հետ կապված գլխավոր մոլորությունն առօրեականության նույնացումն է կենցաղի հետ: Այս առումով չենք կարող համաձայնել այն կարծիքին, ըստ որի առօրեականության հիմնախնդրի պատմագիտական տեսանկյունից քննարկումներում որոշակի հանրույթների կենցաղի, հանդերձանքի, աշխատանքի, իրերի, հանգստի և սովորույթների նկարագրությունն արդարացված է [Ղարագուլյան, 2012, 20]: Մեր համոզմամբ այսօրինակ ուսումնասիրությունները բովանդակային առումով չեն արտացոլում առօրեականության հիմնախնդիրը. այն առհասարակ չպետք է հանգեցնել պարզապես կենցաղի նկարագրություններին: Ուստի նաև պատմության հարացույցի շրջանակներում առօրեականության լուսաբանումը ենթադրում է հիմնահարցի բովանդակային վերլուծություն: Պատմաբանի համար սա հետազոտության սկզբունքորեն նոր փիլիսոփայություն է, որը պահանջում է պատմության ուսումնասիրության և շարադրման դրապաշտական մոտեցումների վերանայում: Կարևոր է արձանագրել, որ առօրեկանության պատմության առարկան և խնդիրները չեն սահմանվում միայն պատմական գիտության ներսում՝ սեփական մեթոդաբանական գործիքակազմի միջոցով, այսինքն՝ այս գիտակարգի առաջացումը չպետք է ընկալել միայն պատմական գիտության զարգացման համատեքստում: Ոչ միայն առօրեականության պատմությունը, այլև առհասարակ սոցիալական պատմությունը ձևավորվել են պատմական գիտության մեջ միջգիտակարգային հետազոտական մոտեցումներ ներդնելու, այն է թե՝ այլ գիտակարգերի տեսական և մեթոդական փորձառությունը կիրառելու մտայնությունից: Միջգիտակարգային մոտեցման հրամայականն այս դեպքում կենտրոնանում է սոցիոլոգիայի որոշ տեսական հարցերի վրա, որոնց յուրացումն առօրեականության պատմաբանի համար առաջնային իմացաբանական նշանակություն ունի: Հետևաբար մենք գտնում ենք, որ առօրեականության պատմության հիմնախնդրի այսպես ասած՝ «տեսական յուրացումը» պատմաբանը պետք է սկսի թեմային առնչվող սոցիոլոգիական տեսությունների ուսումնասիրությունից: Ստորև կներկայացնենք դրանցից մի քանիսը, որոնք, մեր համոզմամբ հիմնարար ազդեցություններ են ունեցել առօրեականության հիմնախնդրի ձևավորման վրա:

Դասական սոցիոլոգիա: Էմիլ Դյուրկհեյմ և Մաքս Վեբեր: Առօրեականության հիմնախնդիրն առնչվում է իրականության սոցիալ-փիլիսոփայական ընկալումների հետ, ավելին՝ առօրեականությունը հանդիսանում է իրականության կողմ և իրականության մեկնաբանություններից մեկը: Սոցիոլոգիական տեսություններում խոսվում է սոցիալական իրականության մասին՝ որպես սոցիոլգիայի ուսումնասիրության տարածք: Դասական սոցիոլոգիայի հիմնադիր հայրերից Էմիլ Դյուրկհեյմն այն անվանում էր «սոցիալական աշխարհ» [Дюркгейм, 1995, 11]: Սոցիալական աշխարհը դա սոցիալական փաստերի աշխարհն է, որը հանդիսանում է օբյեկտիվ իրականություն: Ըստ Դյուրկհեյմի՝ այս իրականության օբյեկտիվ փաստականությունը հետազոտողի համար պետք է լինի անվիճարկելի կանխադրույթ, որն արտահայտվում է սոցիոլոգիական հետազոտության գլխավոր օրենքի մեջ. սոցիալական

փաստերը պետք է դիտարկել որպես իրեր: Դյուրկհեյմը նշում է այն կարևոր առանձնահատկությունը, որով օժտված են սոցիալական փաստերը և որով դրանք դառնում են ճանաչելի, այն է՝ անհատական գիտակցությանը և կամքին դրանց հակազդելու, դիմադրելու հատկությունը: Անհատը հարաբերվում է սոցիալական փաստերին և սոցիալական հոսանքներին (կոլեկտիվ ձգտումներ, սովորույթներ, ավանդույթներ, տարաբնույթ հավատալիքներ, իրավական և բարոյական նորմեր և այլն): Եթե դրանք ընդունում է, ապա իր վարքագիծը հարմարեցնում է դրանց, եթե փորձում է դիմադրել՝ բախվում է դրանց հակազդեցությանը [Дюркгейм, 1995, 36]: Ելնելով այն փաստից, որ ստեղծվելով անհատների կողմից՝ սոցիալական փաստերն այդուհանդերձ ցուցաբերում են ինքնուրույն, անհատի կամքին մեծ մասամբ չենթարկվող, ավելին՝ հաճախ այդ կամքն իրենց ենթարկող վարքագիծ՝ Դյուրկհեյմը զարգացնում է այն գաղափարը, որ սոցիալական փաստերի իրականությունն առանձնահատուկ, օբյեկտիվ իրականություն է, իր բնորոշմամբ՝ sui generis իրականություն [Дюркгейм, 1995, 119], որի դիտարկումն էլ հանդիսանում է սոցիոլոգիայի հիմնախնդիրը:

Եթե Դյուրկհեյմի համար սոցիոլոգիական հետազոտությունների հիմքում սոցիալական փաստերի ուսումնասիրությունն է, ապա դասական սոցիոլոգիայի մյուս նշանավոր ներկայացուցիչը՝ Մաքս Վեբերը, սոցիոլոգիական հետազոտության հիմքում տեսնում է սոցիալական գործողությունն իր սուբյեկտիվ արժեքով: Իր «Տնտեսություն և հասարակություն» հիմնարար աշխատության մեջ Վեբերը գրում է. «Սոցիոլոգիա կոչվում է գիտությունը (այս բազմիմաստ բառի այստեղ ընդունված իմաստով), որը ձգտում է մեկնաբանելով հասկանալ գործողությունը և դրանով պատճառականորեն բացատրել նրա ընթացքն ու արդյունքները» [Вебер, 2016, 67]: Վեբերի սոցիոլոգիական տեսությունը կոչվում է «հասկացող սոցիոլոգիա»: Այստեղ գործողութունը մեկնաբանվում է որպես անհատի կամ անհատների կողմից դրսևորվող այնպիսի վարքագիծ, որի հետ գործողություն կատարողը կամ կատարողները կապում են որոշակի սուբյեկտիվ իմաստ: Իսկ սոցիալական գործողությունն այն գործողությունն է, որը «անհատի կամ անհատների կողմից իր արդեն իսկ ենթադրվող իմաստով հարաբերակցվում է այլ մարդկանց վարքագծին և իր ընթացքով միտվում է դեպի այն» [Вебер, 2016, 67]: «Հասկացող սոցիոլոգիայի» տեսության մեթոդական հիմքում Վեբերը դնում է ռացիոնալ գործողության (սուբյեկտիվորեն իմաստավորված) և իր բնորոշմամբ՝ «պարզապես ռեակտիվ» գործողության միջև (աֆեկտներ, մոլորություններ և այլն) իմաստային սահման՝ նշելով, որ այս սահմանն իրականում փոփոխական է և այն հասկանալու համար պետք է կիրառել տիպականացնող գիտական դիտարկում: Դիտարկման արդյունքում աֆեկտիվ և իռացիոնալ պատճառներով պայմանավորված վարքագծի իմաստային կապերը, որոնք ազդում են գործողության վրա, պետք է ընդունել որպես շեղումներ գործողության նպատակային ռացիոնալ ընթացքից և սրանց հետ հակադրության ֆոնին դուրս բերել ռացիոնալ գիտական վերլուծության ենթարկվող իմաստավորված գործողությունների կատարյալ տիպերը [Вебер, 2016, 69]:

Սոցիալական իրականության և գործողության վերաբերյալ Դյուրկհեյմի և Վեբերի տեսությունները չեն շոշափում առօրեականության հիմնահարցն ուղղակիորեն: Դրանցում չկան առօրեականության հասկացության բովանդակային վերլուծություններ: Վերջիններս պատկանում են սոցիոլոգիայի ֆենոմենոլոգիական դպրոցին [Ղարագուլյան, 2012, 20-27], որին դեռ կանդրադառնանք: Սակայն հենց ֆենոմենոլոգիական դպրոցի ներկայացուցիչները՝ ի դեմս Փիթեր

Բերգերի և Թոմաս Լուկմանի, արձանագրում են Դյուրկհեյմի և Վեբերի դատողություններում առօրեականության հիմնախնդրի համար իմացաբանական հիմնարար նշանակություն ունեցող գաղափարների և տերմինների առկայությունը՝ ըստ էության հաստատելով այն դիտարկումը, որ այս տեսությունները որոշ վերապահումներով կարելի է ընդունել որպես առօրեականության տեսության ներածություն: Հեղինակները նշում են, որ իրենց տեսություններով Դյուրկհեյմն ու Վեբերը սահմանել են ամենակարևոր, ամենահայտնի և ամենաազդեցիկ «առաջխաղացման կարգը», որը պետք է պահպանվի սոցիոլոգիայի իմացության ճանապարհին: Բերգերն ու Լուկմանը խոստովանում են, որ այս ճանապարհով են գնացել նաև իրենք՝ սոցիալական տեսության առարկայի և խնդիրների իրենց սահմանումը ստեղծելիս: Արդյունքում սոցիալական տեսության գլխավոր հարցը նրանց համար ստանում է հետևյալ ձևակերպումը՝ «ինչպե՞ս են սուբյեկտիվ արժեքները դառնում օբյեկտիվ փաստականություն», այլ կերպ ասած՝ ինչպե՞ս է կառուցարկվում իրականությունը: Հեղինակները ներկայացնում են Դյուրկհեյմի sui generis-ի իրենց մեկնաբանությունը, որում իրականությունը հանդես է գալիս որպես սոցիալական փաստերի օբյեկտիվ փաստականության և գործողությունների սուբյեկտիվ արժեքների փոխգործակցություն, ինչն էլ նրանք անվանում են իրականության կառուցարկում [Бергер, Лукман, 1995, 16]: Առօրեականությունը՝ որպես սոցիալական ֆենոմեն, գործառնում է սոցիալական փաստերի և սուբյեկտիվ գործողությունների փոխգործակցության մթնոլորտում, ավելին՝ առօրեականությունը, որպես իրականության կառուցարկման եղանակ, ստեղծում է այս փոխգործակցությունը: Այս ձևակերպումն այն գլխավոր կանխադրույթն է, որից սկսվում առօրեականության իմացությունը: Առօրեականության և սոցիալական գործողության միջև առկա են ծագումնաբանական և իմացաբանական կապեր, որոնց լուսաբանումը պատկանում է սոցիոլոգիական ֆենոմենոլոգիայի դպրոցի հիմնադիր, ավստրիացի սոցիոլոգ Ալֆրեդ Շյուցին:

Ալֆրեդ Շյուցի սոցիոլոգիական ֆենոմենոլոգիական տեսությունը: Ալֆրեդ Շյուցի սոցիոլոգիական ֆենոմենոլոգիական տեսությունը կարելի է համարել Մաքս Վեբերի «հասկացող սոցիոլոգիայի» և գերմանացի փիլիսոփա Էդմունդ Հուսեռլի ֆենոմենոլոգիական փիլիսոփայության գաղափարների սինթեզ: Շյուցը համաձայն է Վեբերի այն մոտեցմանը, որ սոցիալ-մշակութային աշխարհի բոլոր երևույթները ծնվում են սոցիալական փոխազդեցությունների մթնոլորտում և կարող են վերագրվել դրանց: Սակայն կարծում է, որ Վեբերի սոցիոլոգիան չի բացահայտում սոցիալական գործողության և այդ գործողությունը կատարողի կողմից դրան հաղորդվող արժեքի՝ «սուբյեկտիվ արժեքի» էությունը [Шюц, 2004, 156]: Այս հարցի պարզաբանումը Շյուցը գտնում է Հուսեռլի մոտ: Հենվելով վերջինիս կողմից տեսական իմացության ոլորտ ներմուծված այնպիսի ընկալումների վրա, ինչպիսիք են կենսաշխարհը, մարդու բնական դիրքորոշումը, սոցիալական վարքագիծը խթանող նախագիծը, այդ նախագծի իրականացման կանխատեսվող և փաստացի արդյունքի հարաբերակցությունը, գործողությունն իրականացնողի ներքին և գործողության արտաքին ժամանակները, աշխարհի մասին առկա նախկին գիտելիքների պահոցը, որոնք իմաստավորվում են ընդհանրացումների, ձևայնացումների և իդեալականացումների միջոցով [Шюц, 2004, 156], Շյուցը ձևակերպում է իրականության և սոցիալական գործողության հարաբերակցության վերաբերյալ իր

մոտեցումները: Ըստ այդմ՝ նա առանձնացնում է իրականության երկու հիմնական դրսևորում, որոնք գտնվում են փոխգործակցային կապի մեջ՝ առօրեական կյանքի աշխարհի իրականությունը և տեսական գիտական իմացության աշխարհի իրականությունը [Шюц, 2004, 402]: Առօրեականության իրականության աշխարհն առաջնային է՝ ելնելով այն կառուցարկող սոցիալական գործողությունների մի շարք առանձնահատկություններից: Դրանք մարդկային առաջնային կենսական անհրաժեշտությունների բավարարմանն ուղղված գործողություններ են, որոնք իրականացվում են ինքնաբուխ մղումներով:

Առօրեականության բովանդակային վերլուծության հիմքում Շյուցը դնում է այս իրականության միջսուբյեկտայնության գաղափարը, որն ընկալվում է մարդու բնական դիրքորոշմամբ: «Բնական դիրքորոշման համար»,-նշում է նա,-«այս աշխարհն ի սկզբանե եզակի անհատի մասնավոր աշխարհը չէ, այլ միջսուբյեկտային աշխարհ՝ ընդհանուր բոլորիս համար, որի նկատմամբ մենք ունենք ոչ թե տեսական, այլ վերին աստիճանի գործնական հետաքրքրություն: Առօրեական կյանքի աշխարհը մեր գործողությունների և փոխգործակցությունների համար և բեմ է, և օբյեկտ: Մենք պետք է տիրապետենք այն, պետք է փոխենք այն, որպեսզի, գտնվելով մեր եղբայրակիցների մեջ, իրականացնենք այն նպատակները, որոնց հետամուտ ենք» [Шюц, 2004, 403]: Առօրեականությունը մեզանից առաջ վերապրված, մեկնաբանված և արդեն մեր բնական դիրքորոշման վերապրմանն ու ընկալմանը տրված աշխարհն է: Այն «տիրապետելու», փոխելու համար մենք կատարում ենք գործողություններ, որոնց դասակարգումը Շյուցն իրականացնում է իր բնորոշմամբ՝ «արտաքին աշխարհում մարդկային կյանքի ինքնաբուխ դրսևորումների» համատեքստում: Գործողությունը, որ ընկած է առօրեականության կառուցարկման հիմքում, ըստ Շյուցի, ունի հետևյալ հիմնական հատկանիշները: Այն դրսևորվում է արտաքին աշխարհում, «հենվում է նախագծի վրա և բնորոշվում է նախագծված իրադրությանը մարմնական շարժումներով հասնելու նպատակադրությամբ»: Այս գործողությունները, որոնք Շյուցն անվանում է աշխատանք, կարևորագույն դերակատարումն ունեն «առօրեական կյանքի իրականության աշխարհի սահմանման համար» [Шюц, 2004, 406]:

Նորբերտ Էլիասի քաղաքակրթության տեսությունն ու ֆիգուրատիվ սոցիոլոգիական տեսությունը: Ներկայացված սոցիոլոգիական տեսություններն առանցքային կարևորություն ունեն առօրեականության հիմնախնդրի բովանդակային և մեթոդական պարզաբանումների համար: Սակայն մնալով սոցիալ փիլիսոփայական տեսական մեկնաբանությունների դաշտում՝ դրանք չեն լուսաբանում առօրեականության ֆենոմենը պատմության համատեքստում դիտարկելու հնարավորությունը: Գերմանացի պատմաբան և սոցիոլոգ Նորբերտ Էլիասը ցույց տվեց, որ այս խնդիրն իրականում պետք է զբաղեցնի ոչ միայն պատմագիտական, այլ առաջին հերթին սոցիոլոգիական միտքը: Նրա համոզմամբ սոցիալական տեսությունը զգալիորեն թուլացնում է այն մտայնությունը, որին տուրք տալով՝ հասարակության հետազոտությունը կատարվում է միայն տվյալ ժամանակաշրջանի սոցիալական հարաբերությունների հիման վրա, ինչպես պատկերավոր արտահայտվում է հեղինակը՝ «աշխարհը դիտարկվում է սեփական զանգակատան բարձունքից» [Элиас, 2001b, 27]: Էլիասը սոցիոլոգիական հետազոտություններում երկարատև գործընթացների ուսումնասիրության կողմնակից էր: Նրա քաղաքակրթությունների տեսությունը ծանրակշիռ ներդրում է սոցիալական գիտությունների զարգացման մեջ: Հրաժարվելով

քաղաքակրթության էության մետաֆիզիկական մեկնաբանություններից՝ Էլիասն արտահայտում էր այն համոզմունքը, որ քաղաքակրթության զարգացման հիմքում ընկած են փսիխոգենետիկ և սոցիոգենետիկ երկարաժամկետ փոխակերպումները, որոնք հնարավոր է դիտարկել դրանց վերաբերյալ փորձարարական տվյալների հավաքման միջոցով: Էլիասի տեսությունն առաջացել է այն կանխավարկածից, որ իր բնորոշմամբ՝ «անձնային» կառուցվածքների փոխակերպումները, որպիսիք նա դիտարկում է աֆեկտները և դրանց նկատմամբ մարդու վերահսկողությունը, սերնդեսերունդ ընթացել են միևնույն ուղղությամբ, այն է թե՝ իրենց կառուցվածքային տարբերակվածության և ինտեգրացիայի ամրապնդմամբ [Элиас, 2001b, 6]: Նույն ձևով մարդկանց միջև ծավալվող բարդ և բազմաշերտ փոխգործակցային հարաբերությունները, որոնք Էլիասն անվանում է ֆիգուրացիաներ, չնայած պարբերական ետ կամ առաջ շարժումներին, երկարաժամկետ հեռանկարում ունեցել են առաջադիմական և միակողմանի ընթացք, ինչով և պայմանավորված է ավելի կատարելագործված սոցիալական կառուցվածքների առաջացումը [Элиас, 2001b, 8]:

Խոսելով հասարակության և անհատի փոխհարաբերությունների մասին՝ Էլիասը մերժում էր սոցիալական դասական տեսություններում տարածված այն մոտեցումը, ըստ որի հասարակությունը դիտարկվում է որպես վերանհատական տրվածք, որը պետք է հետազոտել մեկուսի: Ընդունելով հասարակության օբյեկտիվ փաստականությունը՝ նա, այդուհանդերձ, համոզված էր, որ այն հնարավոր չէ ուսումնասիրել առանց անհատների՝ դրա ձևավորման գործում մասնակցությունը հասկանալու: «Այն ինչ մեզ պակասում է»,-գրում է Էլիասը,- «մտածողական մոդելներն են և ընդհանուր տեսլականը, որոնց օգնությամբ մենք կկարողանայինք հասկանալ, թե ի՞նչ ենք այնուամենայնիվ մենք իրականում տեսնում ամեն օր, հասու լինել, թե ինչպե՞ս են առանձին մարդիկ միասին ձևավորում ինչ որ այլ բան, որն ավելին է, քան պարզապես առանձին մարդկանց միավորում, հասկանալ, թե ինչպե՞ս են նրանք ստեղծում «հասարակությունը» և ինչպե՞ս է ստացվում, որ այդ հասարակությունը կարող է որոշակիորեն փոխվել, որ այն ունի պատմություն, որն ընթանում է այնպես, ինչպես ընթանում է, և որը նրան ձևավորող մարդկանցից և ոչ մեկը չի մտահաղացել, չի կանխամտածել և չի ծրագրել» [Элиас, 2001a, 19]: Ինչպես նկատում ենք՝ Էլիասին սոցիալական տեսության մեջ նույնպես առաջնահերթ հետաքրքրում էր հասարակության կառուցարկման հիմնախնդիրը: Իսկ ֆիգուրացիաների՝ նրա ձևավորած ընկալումը հստակ աղերս ունի ոչ միայն իմաստավորված գործողությունների, այլ նաև առօրեական կյանքի միջսուբյեկտայնության գաղափարի հետ: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ հետագայում ձևավորված սոցիոլոգիական ֆենոմենոլոգիական ուսմունքը որոշակի կրել է նաև Էլիասի ֆիգուրատիվ սոցիոլոգիայի ազդեցությունը:

Առօրեականության վերաբերյալ Էլիասի դիտարկումները որոշակիորեն տարբերվում են սոցիոլոգիական ֆենոմենոլոգիական դպրոցի մեկնաբանություններից: Հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ Էլիասն առօրեականությունը դիտարկում էր ոչ առօրեականի հետ համադրման համատեքստում [Шубина, 2006, 56]:

Պատմության ընթացքում մարդկային անհատական և հասարակական կենսափորձի փոխակերպումների հետազոտությունն, ըստ էության, Էլիասի տեսությունը դարձնում է

առօրեականության պատմությունը տեսականորեն և մեթոդաբանորեն սնուցող հայեցակարգ: Ինչպես իրավացիորեն նշում է ռուս հեղինակ Կոզլովսկին, «Էլիասը ձևակերպեց հասարակության և մարդու ֆիգուրատիվ փոխակերպման հայեցակարգը, ինչը հնարավորություն տվեց պատմության խճճվածքներում տեսնել մարդկանց անհատական ճակատագրերն ու սոցիալական հետագիծը» [Козловский, 2000, 40]:

Եզրակացություն: Վերջում կուզենայինք ավելացնել, որ առօրեականության պատմության հետազոտության խնդիրներին հասու լինելու նպատակով մեր կողմից առաջարկվող սոցիոլոգիական տեսությունների ներկայացված հաջորդակարգը, կամ Փիթեր Բերգերի և Թոմաս Լուքմանի բնորոշմամբ՝ «առաջխաղացման կարգը», կարող է վիճարկվել առօրեականության պատմության խնդիրներով հետաքրքրվող մասնագետների կողմից, ինչը մենք բնական ենք համարում:

Մեզ կարող են հակասել, օրինակ, ասելով, որ այսօր առօրեականության պատմությունը որպես ինքնուրույն գիտակարգ համաշխարհային պատմագիտության մեջ ծանրակշիռ ներկայացվածություն ունի՝ ինքնուրույն հետազոտական դպրոցների մակարդակով (առօրեականության պատմության գերմանական դպրոցը, միկրոպատմությունների իտալական դպրոցը և այլն), ու այս դպրոցների կողմից հիմնախնդիրը բավական լուսաբանված է, ուստի այս դպրոցների հետազոտական փորձի և ինտելեկտուալ ժառանգության յուրացումը պետք է առաջնային համարել առօրեականության հիմնախնդիրը հասկանալու համար: Մենք գտնում ենք, որ այս մտայնությունն իրականում խոցելի է, որովհետև այս դեպքում պատմաբանը հայտնվում է մի իրավիճակում, երբ թեման սկսում է ուսումնասիրել «երկրորդ աղբյուրից», իսկ առօրեականության նրա ընկալումը կրում է ավելի վերացական բնույթ, հաճախ ինտուիտիվ հասկանալի, բայց առանց անհրաժեշտ որոշակիության: Որոշակիության տակ մենք հասկանում ենք «առօրեականություն» հասկացության տեսական ըմբռնումները, առանց որոնց անհնար կլինի այս հիմնախնդրի ներմուծումը պատմական հետազոտությունների ոլորտ:

Հետևաբար՝ հստակեցնելով մեր պնդումը, կարող ենք ասել, որ առօրեականության պատմության հետազոտությունը պետք է սկսել առօրեականության հետազոտությունից՝ որպես ճանաչողության ինքնուրույն ոլորտ, որն արտացոլված է սոցիոլոգիական տեսություններում: Ընդունելով, որ ցանկացած հետազոտող ինքն է ընտրում հետազոտական խնդիրը «շոշափելու», դրա տեսական և մեթոդաբանական նրբությունները պարզաբանելու իր մարտավարությունը, մենք այդուհանդերձ մնում ենք այն համոզման, որ պատմաբանի համար սոցիոլոգիական տեսություններում խնդրո առարկա թեմային առնչվող տեսական և մեթոդական խնդիրների յուրացումը ստեղծում է իմացական այն անհրաժեշտ հենքը, որի վրա և կառուցվում է առօրեականության պատմության հետազոտության առարկայի մեր ընկալումը: Օբյեկտիվ և սուբյեկտիվ իրականությունների, իրականության կառուցարկման, մարդու և հասարակության փոխգործակցային առնչությունների, առօրեականության միջսուբյեկտայնության և այլ տեսական խնդիրների մասին սոցիալ-փիլիսոփայական գիտելիքներն անհրաժեշտ կողմնորոշիչեր են մարդկային կեցության սոցիալ-մշակութային համատեքստը հասկանալու և պատմական տարբեր ժամանակաշրջաններում այն դիտարկելու ճանապարհին: Ինչպես իրավացիորեն նշում է Արման Ղարագուլյանը՝ «առանց առօրեականության իմացության հնարավոր չէ ոչ մի հումանիտար և հասարակական գիտություն» [Ղարագուլյան, 2012, 27]: Այս դիտարկումն այսօր ավելի քան

արդիական ենք համարում նաև միջգիտակարգային մոտեցումների արժևորման տեսանկյունից և ցավով արձանագրում ենք, որ հայ գիտական միջավայրում ո՛չ սոցիոլոգների, ո՛չ պատմաբանների կողմից դեռևս բավականաչափ գիտակցված չէ միջգիտակարգային երկխոսության կարևորությունը:

Գրականության ցանկ

Ղարագուլյան Ա. 2012թ., Առօրեականությունը որպես իրականության կառուցարկման եղանակ, «Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն» 138.4, Երևան, էջ 20-27:

Бергер П., Лукман Т. 1995, Социальное конструирование реальности: Трактат по социологии знания (перевод Е. Руткевич), Москва, 323 с.

Вебер М. 2016, Хозяйство и общество: Очерки понимающей социологии в 4 т. Том 1: С Социология (перевод с немецкого Л. Ионина и др.), Москва, 446 с.

Дюркгейм Э. 1995, Социология: Ее предмет, метод, предназначение (перевод с французского А. Гофмана), Москва, 352 с.

Козловский В. 2000, Фигуративная социология Норберта Элиаса, Журнал социологии и социальной антропологии, Т. 3, № 3, с. 40-59.

Репина Л. и др. 2004, История исторического знания: Пособие для вузов, Москва, 288 с.

Февр Л. 1991, Бои за историю, Москва, 628 с.

Шубина М. 2006, О понятии и природе повседневности. Известия Уральского государственного университета, но.42, Урал, с. 55-62.

Шюц А. 2004, Избранное: Мир, светящийся смыслом (перевод с немецкого В. Николаева и др.), Москва: Росспэн, 1056 с.

Элиас Н. 2001, Общество индивидов (перевод с немецкого А. Антоновского и др.), Москва, 336 с.

Элиас Н. 2001, О процессе цивилизации. Социогенетические и психогенетические исследования. Том 1. Изменения в поведении высшего слоя мирян в странах Запада (перевод с немецкого А. Руткевич), Москва, 332 с.